

ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2011 թվականի առաջին կիսամյակում կատարված կադրային աշխատանքների հաշվետվություն

2011 թվականի առաջին կիսամյակում կիսամյակում ՀՀ ԱՎԾ աշխատակազմում՝

• աշխատանքի է նշանակվել 15 մարդ, որից՝	
քաղաքացիական ծառայության պաշտոններում՝	8
քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում՝	5
տեխնիկական սպասարկում իրականացնող պաշտոններում՝	2
• աշխատանքից ազատվել է 13 մարդ, որից՝	
քաղաքացիական ծառայողներ	7
քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում՝	3
տեխնիկական սպասարկում իրականացնող պաշտոններում՝	3

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար ՀՀ ԱՎԾ աշխատակազմը անցկացրել է 7 մրցույթ:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի կողմից համապատասխան դասային աստիճաններ է շնորհվել առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 6 քաղաքացիական ծառայողի:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով ՀՀ քաղաքացիական ծառայության առավելագույն դասային աստիճաններ է շնորհվել 3 քաղաքացիական ծառայողի:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

	Գլխավոր պաշտոններ	Առաջատար և կրտսեր պաշտոններ
Վերապատրաստվել են՝	12	27
Ատեստավորվել են՝		38

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի, Երևանի պետական լեզվաբանական համալսարանի, Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի, Երևանի «Գլաձոր» համալսարանի, Գավառի պետական համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի թվով 173 ուսանողների համար:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով 3 քաղաքացիական ծառայող խրախուսվել են շնորհակալագրով: